ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<<Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Դիտորդ խորհրդի 25.09.2024թ. նիստի

ք.Երևան *25.09.2024թ.*

Նախագահությամբ Լ.Պետրոսյանի

Քարտուղարությամբ Գ.Հովսեփյանի

Նիստին մասնակցում էին Դիտորդ խորհրդի հետևյալ անդամները՝

1. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Լևոն Պետրոսյան*
2. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Վահագն Ավագյան*
3. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Հովհաննես Եղյան*
4. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Տիգրան Սահակյան*
5. *Դիտորդ խորհրդի անդամ՝Գևորգ Ավագյան*

Քվորումն ապահովված է, և Դիտորդ խորհրդը իրավազոր է որոշումներ ընդունել օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ:

Օրակարգում՝

4.<<Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> ԻԿ Կարգապահական հանձնաժողովի կողմից՝ Ա/Հ Վարազդատ Դավթյանի սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի վերաբերյալ՝ ՀՀ Արդարադատության նախարարությունից վերահասցեագրված Ա/Հ Վարազդատ Դավթյանի ներկայացուցիչ Քրիստինե Գագիկի Տոնոյանի թիվ Ս/23400-2024 դիմումի հիման վրա՝ՍԳԿԿ՝ԻԿ Դիտորդ խորհրդին 19.08.2024թ.-ին ներկայացված՝ 08.08.2024թ.-ի եզրակացության քննարկում /հետաձգված նիստի շարունակությունը/:

Կապված Դիտորդ խորհրդի նախագահ Արսեն Չիտչյանի բացակայության հանգամանքով, համաձայն <<ՍԳԿԿ>> ԻԿ Կանոնադրության 10-րդ հոդվածի 18-րդ կետի նիստը վարում է Դիտորդ խորհրդի ամենատարեց անդամ Լևոն Պետրոսյանը:

Մինչև օրակարգի հարցերի քննարկմանն անցնելը, <<Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Դիտորդ խորհրդի նիստի նախագահող Լ. Պետրոսյանը հանդես եկավ ողջույնի խոսքով:

4. Դիտորդ խորհրդի նիստի նախագահող Լ.Պետրոսյանը ներկայացրեց օրակարգի 4-րդ հարցը, այն է՝ .<<Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> ԻԿ կազմակերպության Կարգապահական հանձնաժողովի կողմից՝ Ա/Հ Վարազդատ Դավթյանի սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի վերաբերյալ՝ ՀՀ Արդարադատության նախարարությունից վերահասցեագրված Ա/Հ Վարազդատ Դավթյանի ներկայացուցիչ Քրիստինե Գագիկի Տոնոյանի 27.03.2024թ. թիվ Ս/23400-2024 դիմումի հիման վրա՝ՍԳԿԿ՝ԻԿ Դիտորդ խորհրդին 19.08.2024թ.-ին ներկայացված՝ 08.08.2024թ.-ի եզրակացության քննարկման նպատակով 04.09.2024թ. հրավիրված Դիտորդ խորհրդի նիստը հետաձգվել էր և Խ.Նազարյանին տրամադրվել էր մեկ շաբաթ ժամկետ վարույթին վերաբերվող լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու համար : 23.09.2024թ. Խ. Նազարյանը ներկայացրել է ՀՀ

Սնանկության դատարանի 10.06.2024թ. թիվ ՍՆԴ/3123/04/20 որոշումը, ըստ որի սնանկության գործով կառավարիչ Խ.Նազարյանը պատշաճ կարգով կատարում է օրենքով սահմանված իր լիազորությունները, ուստի մերժել է ԱՀ Վարազդատ Դավթյանի ներկայացուցիչ Քրիստինե Տոնոյանի միջնորդությունը՝ թիվ ՍՆԴ/3123/04/20 գործով սնանկության կառավարիչ Խաչիկ Նազարյանի լիազորությունները դադարեցնելու մասին :

Հարցը դրվեց քննարկման:

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումն հայտնեցին Գևորգ Ավագյանը, Վահագն Ավագյանը, Տիգրան Սահակյանը, Հովհաննես Եղյանը :

<<Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Դիտորդ խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

Կարճել ԱՀ Վարազդատ Դավթյանի սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի գործողությունների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը:

Կողմ-5
Դեմ-0
Չեռնպահ-0
Որոշումը ընդունվեց միաձայն :

Նախագահող՝ Լ.Պետրոսյան

Քարտուղար՝ Գ.Հովսեփյան